



**ԱՐԵՒՍՏԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ**  
**NATIONAL SUPREME COUNCIL OF THE ARMENIANS OF WESTERN ARMENIA**  
**НАЦИОНАЛЬНЫЙ ВЕРХОВНЫЙ СОВЕТ АРМЯН ЗАПАДНОЙ АРМЕНИИ**  
**المجلس الوطني الأعلى لأرمن أرمينيا الغربية**

**Պաշտօնական Հաղորդագրություն**  
**Տարածաշրջանի վերջին անցուդարձերուն մասին**

22 Յուլիս 2020

Արեւմտահայութեան Ազգային Գերագոյն Խորհուրդի նախաձեռնող մարմինը կ'ողջինէ՝ Ռուսաստանի Դաշնութեան եւ Իրանի Իսլամական Հանրապետութեան արտաքին գործոց նախարարներուն միջեւ, 21 Յուլիս 2020 թուականին կայացած պատմական կարեւորութիւն ընդգրկող հանդիպումը: Նաեւ իր համաձայնութիւնը կը յայտնէ՝ անոր աւարտին հրապարակային մամլոյ ասուլիսի ընթացքին արտայայտուած դրիքորոշումներու ամբողջական բովանդակութեան: Մանաւանդ այն բաժինին որ կը վերաբերի տարածաշրջանի եւ աշխարհի ապագային մասին երկու պետութիւններու տեսլականին, որ մեծաւ մասամբ համապատասխան է մեր ազգային ռազմավարութեան սկզբունքներուն:

Թիրքիոյ վերջին անպատասխանատու սպառնալիքները՝ որոնք հնչեցին հարաւային կովկասի իրավիճակը լարուածութեան մղելու նպատակով, պարզապէս կուզան որպէս կոպիտ արտայայտութիւն՝ Ռուսաստանի եւ Իրանի հետ գոյութիւն ունեցող Թիրքիոյ արմատական հակասութիւններուն եւ անհամաձայնութիւններուն:

Նման բովանդակութեամբ թրջական սպառնալիքները կը մատնեն անոր մեկուսացումն ու տարածաշրջանային դարաւոր եւ կործանիչ դերակատարութեան վախճանը, հետեւաբար եւ Լոզանի պայմանագիրով ստեղծուած անոր գոյութեան վախճանը:

Մենք բարձրագոյն լրջութեամբ կ'ընկալենք անոր սպառնալիքները՝ ակնկալելով որ ան իր յուսահատութեան մէջ կրնայ դիմել անպատասխանատու արկածախնդրութիւններու, դէպի Հայաստանի Հանրապետութեան սահմաններ փոխադրելով իր ահաբեկչական ոճրագործ ջոկատները: Այդ եթէ տեղի ունենայ՝ կայծ պիտի հանդիսանայ Հայկական լայնածաւալ ազատագրական գործողութիւններու:

**ԱՐԵՒՍՏԱՀԱՅՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԳԵՐԱԳՈՅՆ ԽՈՐՀՈՒՐԴ-Ի**  
**նախաձեռնող մարմին**

22 Յուլիս 2020